ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2007-2008

ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին 5
Ուսումնամեթոդական վարչություն 91
Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն 95
Միջազգային համագործակցության վարչություն 99
Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն 106
Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարան 109
Գիտակազմակերպական բաժին 113
Համալսարանական կրթության զարգացման բաժին 114
Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին 117
Մինչհամալսարանական կրթության կենտրոն 118
Շրջանավարտների և կարիերայի կենտրոն 119
Մշակույթի կենտրոն 122
Պատմության թանգարան 125
Արհկոմիտե 126
Ուսանողական կառույցներ 128
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ 130
Աստվածաբանության ֆակուլտետ 151
Արևելագիտության ֆակուլտետ 159
Ժուռնալիստիկայի ֆակուլտետ 170
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ 176
Իրավագիտության ֆակուլտետ 187
Կենսաբանության ֆակուլտետ 206
Հայ բանասիրության ֆակուլտետ 253
Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ 275
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ 298
Պատմության ֆակուլտետ 308
Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ 332
Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ 354
Ռուս բանասիրության ֆակուլտետ 383
Սոցիոլոգիայի ֆակուլտետ 403
Տնտեսագիտության ֆակուլտետ 414
Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ 428
Քիմիայի ֆակուլտետ 447
Ֆիզիկայի ֆակուլտետ 477
Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետ 534
Համահամալսարանական ամբիոններ 539
Իջևանի մասնաճյուղ 543
«Քենդլ» գիտահետազոտական ինստիտուտ 564
Հայագիտական կենտրոն 569
Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն 575
Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոն 580
Վրացագիտության կենտրոն 583
Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն 585
Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն 588
Հունագիտության գիտաուսումնական կենտրոն 589
Եգիպտագիտության հայկական կենտրոն 590
Հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոն 592
Կոսմոլոգիայի գիտահետազոտական խումբ 593
«Ռուսկի միր» հիմնադրամի մասնաճյուղ 595
Հրատարակչություն 595
Գիտական հանդեսներ 602
2007-2008 ուստարում ԵՊՀ-ում տեղի ունեցած հիշարժան միջոցառումներն ըստ www.ysu.am-ի լրահոսի 603

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *Սիմոնյան Արամ Հրաչիկի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտոր
2. Հովհաննիսյան Հայկազ Ժորայի, պատմ. գիտ. դոկտոր
3. Գալստյան Սերյոժա Աշոտի, բան. գիտ. դոկտոր
4. Ավետիսյան Յուրիկ Սրապիոնի, բան. գիտ. դոկտոր
5. Մեյթիխանյան Փառանձեմ Գառնիկի, բան. գիտ. թեկնածու
6. Թելյան Լեոնիդ Գուրգենի, բան. գիտ. թեկնածու
7. Ֆելեքյան Մանուկ Հարությունի, բան. գիտ. թեկնածու
8. Մաղալյան Վլադիմիր Սարգիսի, բան. գիտ. թեկնածու
9. Սահակյան Լուսինե Սուրենի, բան. գիտ. թեկնածու
10. Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի, պատմ. գիտ. թեկնածու
11. Մելիքյան Գուրգեն Վրեժի, բան. գիտ. թեկնածու
12. Սարգսյան Վահան Գերասիմի, բան. գիտ. թեկնածու
13. Ավետիսյան Սուրեն Ռուդիկի, պատմ. գիտ. թեկնածու
14. Գևորգյան Գուրգեն Անուշավանի, բան. գիտ. թեկնածու
15. Ղարիբյան Ալիկ Ավետիքի, բան. գիտ. թեկնածու
16. Կոնդակչյան Կատարինա Ասատուրի, կրտսեր գիտաշխատող
17. Բաբայան Էմմա Հարությունի, կրտսեր գիտաշխատող
18. Մակարյան Էվելինա Անդրանիկի, կրտսեր գիտաշխատող
19. Սարգսյան Անի Համլետի, լաբորանտ

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Վաղ միջնադարյան գեղարվեստական արձակի ժանրային համակարգը (5-9-րդ դարեր): (Պետական ֆինանսավորում):	Մաղոյան Ա. Գ.
2. Բառագործածական և քերականական կարծրատիպային շեղումները գրական հայերենից զանգվածային լրատվամիջոցների լեզվում: (Պետական ֆինանսավորում):	Գևորգյան Կ. Հ.
3. Հայաստանի պատմական և արդի տեղանունների բառարան: (Պետական ֆինանսավորում):	Բարսեղյան Հ. Խ.
4. 20-րդ դարի ԱՄՆ-ի պոեզիայի զարգացման ուղիները: (Պետական ֆինանսավորում):	Հարությունյան Ա. Մ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Թեմայի կատարման առաջին փուլի համար 2008 թ-ին նախատեսված է կատարել հավաքչական աշխատանք: Հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ առաջատար դերը պատկանում էր պատմագրությանը: Հայ դասական պատմիչների երկերում տեղ են գտել վիպական

մանրապատումներ, զրույցներ, կենսագրական ակնարկներ, բանահյուսական այլևայլ պատումներ, որոնցով պայմանավորված է այդ պատմությունների գեղարվեստական նշանակությունը (Փավստոս Բուզանդ, Եղիշե, Մովսես Խորենացի): Հայտնի է, որ հինգերորդ դարում հունարենից և ասորերենից թարգմանվել են բավականին մեծ թվով աշխարհիկ-գեղարվեստական գործեր (օր.՝ «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ»), զուգահեռաբար գրվել են ինքնուրույն կենսագրական բնագրեր (օր.՝ «Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկանն») և այլն: Թեմայի աշխատակիցները տպագիր ծավալուն գրականությունից առանձնացրել են այն արձակ գործերը, որոնք վերագրելի են 5-10-րդ դարերին: Ընտրություն է կատարվել պատմիչների երկերից, առակների, զրույցների, մանրապատումների հրատարակություններից: Հաջորդ փուլում նախատեսվում է նյութեր հավաքագրել ձեռագրերից:

Թեմայի ղեկավարը աշխարհաբարի է վերածել «Վարք սրբոց» ժողովածուի առաջին հատորը և հանձնել տպագրության (25.0 մամուլ): Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը լույս է ընծայել Ա. Մաղոյանի կազմած «Ապրել գալիքի տեսիլքով» ժողովածուն (20 մամուլ): Նրա խմբագրությամբ Անթիլիասում լույս են տեսել «Մատենագիրք Հայոց» մատենաշարի 13-րդ և 14-րդ հատորները, որոնք ամփոփում են «Գանձարան» ժողովածուն: Ավագ գիտաշխատող Գ. Մաղոյանի «Գողթան երգեր և Արիստոն Փեղղացի» հոդվածը տպագրվել է «Հանդես Ամսօրյայի» 2008 թ. Ա-ԺԲ միացյալ համարում (էջ 13):

Թեմա 2. Գիտական խումբն ուսումնասիրում է ՁԼՄ-ների լեզվում մշտական գործածություն ստացած շեղումները գրական հայերենից: Դրանք կա՛մ ներլեզվական փոփոխություններ են, կա՛մ բացահայտ սխալներ: Աշխատությունը բաղկացած է 2 բաժնից: «Բառագործածական շեղումներ» բաժինը ներկայացված է 6 գլուխներով, որոնցում քննության առնվող հարցերն են՝ մոլախոտային բառեր (մշտապես կրկնվող կամ ուղղակի ավելորդ բառեր), բառաշփոթ (մի բառի գործածություն մեկ ուրիշի փոխարեն), բարբառային բառեր, բառաբարդությունների արհեստական մասնատում, օտարաբանություններ:

Երկրորդ բաժինը ևս ներկայացված է 6 գլուխներով: Քննության են առնվում գոյականային, ածականային, դերանվանական, թվականի, բայական քերականական մասնիկների ու վերջավորությունների ձևափոխությունները կամ նրանց ոչ ճիշտ կիրառությունները: Օրինակ՝ «ներ» հոգնակիակերտի փոխարեն «եր»-ի գործածություն, ածականի կրկնակի գերադրականի գործածություն, բայի «ե» խոնարհումը «ա» խոնարհումով փոխարինում և այլն:

Աշխատությունը բաղկացած կլինի մոտ 600 էջից: Այն կնպաստի մեր լեզվում տարածվող մերժելի լեզվական կարծրատիպերի վերացմանը, խոսքի մշակույթի մակարդակի բարձրացմանը, հայերենն անաղարտ պահելուն:

Թեմա 3. Աշխատանքն ստեղծվել է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» (Երևան, 1986-2001 թթ., հատոր 1-5) վերախմբագրմամբ, ինչպես նաև բառարանի հեղինակների և նրա խմբագիրների ճշգրտում-լրացումներով, այն հրատարակման պատրաստող ողջ գիտական աշխատակազմի ջանքերով:

Կատարվել է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» հինգհատորյակի համառոտագրում-վերախմբագրումը, ինչպես նաև կատարվել են պահանջվող նոր տվյալների մասնակի լրացում-ճշգրտումները: Ավարտվել է այս ամենի համակարգչային մուտքագրումը: Աշխատանքը բարեհաջող իր ավարտին կհասցվի, եթե «Հայաստանի պատմական և արդի տեղանունների բառարանը» լրացվի վերջին 17 տարում ՀՀ-ում տեղի ունեցած պատմա-մշակութային, տնտեսական, քաղաքական, վարչատարածքային փոփոխությունների մասին տվյալներով:

Առավել կարևոր են բնակավայրերին վերաբերող նորությունները. դրանք վերաբերում են բնակչության տեղաշարժերին, ազգային կազմի փոփոխություններին, տնտեսական,

արդյունաբերական-շինարարական առաջընթացին, ուսումնագիտական, պետական-վարչական բնագավառների նորույթներին:

Եռահատոր բառարանի լրացումներով և վերջնական փոփոխություններով վերջնական խմբագրումը աշխատանքը դարձնում է Հայկական լեռնաշխարհին, հայ պետականությանը, նրա տարածքում ապրած հայ ժողովրդի մեծագործություններին, մյուս կողմից Սուլթանական Թուրքիայի կողմից կատարված Ցեղասպանությանը ենթարկվելու իրողությունների անփոխարինելի մի վկայություն:

Միաժամանակ նոր հրատարակվող աղբյուրների հիման վրա հարստացվում է մոտ 50 տարի շարունակաբար լրացվող հայոց տեղանունների շուրջ 1 միլիոնանոց քարտարանը:

Այս օրերին շատ երկրների իշխանություններ և խորհրդարաններ պաշտոնապես ճանաչել են Ցեղասպանության փաստը, իսկ Թուրքիան և Ադրբեջանը փաստորեն դեռ շարունակում են այդ ցեղասպանությունը: Այսօր օրակարգի հարց է դարձել ԼՂՀ փաստացի անկախության միջազգային ճանաչման իրողությունը. հայոց տեղանունների նորովի քննությունը այս ասպեկտներով չի կարող դառնալ երկընտրանքի առարկա, և թարմ փաստերով լրացված հրատարակումը լրացուցիչ հիմնավորման կարիք չունի: Բառարանի եռահատոր տարբերակի հրատարակումը, կարծում ենք, տարիներ շարունակ գործող գիտական աշխատակազմի, ինչպես նաև պետհամալսարանի՝ այս ոլորտում ունեցած ամենամեծ ձեռքբերումներից մեկը կարող է դառնալ:

Բառարանի համակարգչային մուտքագրված, վերախմբագրված, մասնակի ճշգրտված նյութը ամբողջական կդառնա գրքի հրատարակման, տպագրական աշխատանքների ավարտմամբ:

Բառարանի 1-2 հատորները մինչև այս տարվա վերջը նախատեսված է ուղարկել հրատարակչություն:

Թեմա 4. Հետազոտվում է ոչ միայն ամերիկացի, այլև ամերիկահայ (Փիթեր Բալաքյան, Դայանա Տեր-Հովհաննիսյան, Հարոլդ Բոնդ և այլք) բանաստեղծների ստեղծագործությունները, նրանց արվեստի գեղագիտական սկզբունքները:

Հրատարակվել է Փիթեր Բալաքյանի «Լույսի տխուր օրերը» ժողովածուն (թարգմանությունը, ընդարձակ առաջաբանը, ծանոթագրությունները՝ Ա. Հարությունյանի): Հրատարակվել է չորս հոդված: Պատրաստ են հրատարակման ԱՄՆ-ի մեծ բանաստեղծներ Թեոդոր Ռյոթքեի և Ալեն Գինզբերգի ստեղծագործություններին նվիրված մենագրությունները:

Կենտրոնում կատարված գիտական այլ աշխատանքների մասին:

Շուրջ երեք տարի առաջ՝ 2005 թվականին վերաբացված Երևանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնի գործունեության նպատակը համալսարանում կատարվող հայագիտական հետազոտությունները համակարգելն էր, ինչպես նաև կոնկրետ գիտական ուսումնասիրություններ իրականացնելը հայագիտության գերակա ուղղություններով: ԵՊՀ ղեկավարության կողմից կենտրոնի առջև խնդիր դրվեց հետազոտությունների հիմնական առանցքը դարձնել հետևյալ ուղղությունները.

- Հայ ազգային ինքնության խնդիրը
- Հայոց պետականությունների պատմության ուսումնասիրությունը
- Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության, պատմագրության և մատենագիտության հիմնախնդիրների ուսումնասիրությունը
- Օտարազգի հայագիտական ժառանգության ուսումնասիրությունը
- Հայագիտության դասականների ժառանգության ուսումնասիրությունը և այլն:

Հետազոտության գերակա այս ուղղություններին հաշվետու տարում ավելացան ևս երկուսը, այն է՝

- Հայ-օսմանական առնչությունների ուսումնասիրությունը

- Արևելահայերենի և արևմտահայերենի լեզվական առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Հայագիտական կենտրոնի ուսումնասիրության կարևորագույն ուղղություններից մեկն այսօր Հայոց Մեծ եղեռնի թեման է: Կենտրոնը նպատակադրված շարունակել է իր ուսումնասիրություններն այս ուղղությամբ՝ շեշտը դնելով մատենագիտական աշխատանքի, Եղեռնի զոհերի ցուցակները ճշտելու, ինչպես նաև ցեղասպանության ականատեսների վկայությունները հավաքելու, դրանք դասակարգելու և հրատարակելու վրա: Արդեն տպագրության գործընթացում է ակադ. Հր. Ռ. Սիմոնյանի Կիլիկիահայության կոտորածներին նվիրված մենագրությունը: Կենտրոնը պատրաստվում է նաև տպագրության ներկայացնել Հայոց Մեծ եղեռնին վերաբերող 1997-2007 թթ. ռուսալեզու մամուլի մատենագիտությունը: Կենտրոնում շարունակվել են աշխատանքները օտարազգի գիտնականների հայագիտական ժառանգության ուսումնասիրության, մասնավորապես Հայկական հարցի մասին գերմաներենով աշխատությունների և գեղարվեստական երկերի թարգմանության ուղղությամբ:

Կենտրոնի գիտական հետաքրքրությունների շրջանակներում է հայոց պետականության պատմության և հայոց ինքնության խնդիրների ուսումնասիրությունը, ընդսմին, դրանցում հատուկ շեշտադրվում են հայոց պատմության շրջադարձային փուլերը, ազգային-ազատագրական պայքարի գլխավոր դրվագները: Այլ խոսքով՝ փորձ է արվում բացահայտել հայոց պատմական ճակատագրի այնպիսի ծալքեր, որոնք պատմագիտական նորովի լուսաբանության կարիք ունեն: Այս հիմնախնդիրների առնչությամբ կենտրոնը այս տարվա վերջին և 2009 թ. սկզբին պատրաստվում է հանդես գալ ստվարածավալ հրատարակություններով. ակադ. Հ. Ռ. Սիմոնյանի երկհատորանոց ուսումնասիրությունը նվիրված է հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության կնճռոտ հարցերի լուսաբանությանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Հ. Սիմոնյանի մենագրությունը նվիրված կլինի Զանգեզուրի 1918-1920 թթ. գոյամարտի պատմությանը՝ դրանով ամփոփելով Զանգեզուրի հերոսամարտի պատմությունը, տպագրության գործընթացում է նաև պրոֆ. Հ. Ժ. Հովհաննիսյանի հայ-ռուսական հարաբերությունների պատմության առանձին դրվագներին նվիրված ուսումնասիրությունը (ռուսերեն):

Այս աշխատանքներին զուգահեռ՝ կենտրոնը շարունակում է զբաղվել նաև օտարազգի հայագիտական պատմագիտական և գրականագիտական ժառանգության ուսումնասիրությամբ: Այս բնագավառում առայժմ առաջնությունը տրվել է ռուսական աղբյուրների ուսումնասիրությանը: Ընդ որում՝ ուսումնասիրությունները ընթանալու են մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամենալայն կիրառմամբ, որը հնարավորություն կտա խորությամբ ուսումնասիրելու 19-րդ դարի և 20 դ. սկզբի մեր ժողովրդի տնտեսական, սոցիալական և մշակութային պատմության շատ էջեր: Հավաքման գործընթացում են ռուսական ամենատարբեր, հիմնականում վիճակագրական բնույթի 800 աղբյուրներ: Բասկերենի ծագումնաբանական առանձնահատկությունների և հայերենի հետ ունեցած լեզվական առնչություններին է նվիրված բ.գ.թ. Վահան Սարգսյանի նոր ուսումնասիրությունը:

2007-2008 ուստարում կենտրոնի գիտական կարևոր ձեռքբերումներից պետք է համարել գիտահետազոտական երկու խմբերի ստեղծումը: Դրանցից առաջինի՝ լեզվագիտական խմբի ուսումնասիրության հիմնական նյութը գրական հայերենի խոսակցական տարբերակում վերջին 15-20 տարիների ընթացքում կատարված փոփոխություններն են: Խումբը պատրաստվում է առանձին բաժիններով ընդգրկել հայերեն խոսակցականի բոլոր մակարդակները՝ հնչյունաբանություն, բառապաշար, ձևաբանություն և շարահյուսություն: Քննության կենթարկվեն նաև հայրենագիտության մեջ դեռևս վերջնական լուծում չստացած տեսական բնույթի որոշ խնդիրներ:

Եվ վերջապես, կենտրոնում ստեղծված երկրորդ նոր խումբը զբաղվում է հայ-օսմանական առնչությունների ուսումնասիրությամբ: Այս խումբն իր աշխատանքներն իրականացնում է մի քանի ուղղություններով, այն է՝ օսմանյան կայսրության հայաբնակ նահանգների պատմական

ժողովրդագրության ուսումնասիրություն՝ օսմանյան աշխարհագիր մատյանների, հայկական և օտար աղբյուրների համադրությամբ, հայաբնակ նահանգները օսմանյան վարչական բաժանումներում, թյուրքականության գաղափարաբանության լուսաբանություն և այլ հիմնահարցեր: Խումբն իր առջև խնդիր է դրել նաև հայ ուսանողների համար ստեղծել օսմաներենի դասագիրք (հեղինակային խումբ՝ Լ. Սահակյան, Ա. Սաֆարյան, Գ. Մելիքյան, Ա. Սարգսյան): Խմբի ղեկավար, պ.գ.թ. Լ. Սահակյանը տպագրության է ներկայացրել «Հայոց Համշեն գավառը օսմանյան կայսրության վարչաքաղաքական համակարգում» պատմաազգագրական ուսումնասիրությունը, ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի հայ համայնքի հրավերով հանդես է եկել դասախոսություններով: Խմբի անդամ, պ.գ.թ. Ալ. Սաֆարյանը հրատարակության է պատրաստում «Զիա Գյոքալփի պատմաքաղաքական հայացքները» մենագրությունը (մոտ 20 մամուլ): Խմբի ծավալած արդյունավետ գիտական գործունեության մասին է վկայում նաև նրա անդամների մասնակցությունը միջազգային հեղինակավոր հինգ գիտաժողովներին:

2007-2008 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	2	-	-	18	3

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Joseph Augustin Shaho,* Aitor; leyenda cantabra'ho, ֆրանսերեն, իսպաներեն, բասկերեն, (թարգմանությունը և առաջաբանը՝ Վ. Սարգսյանի), «Ասողիկ» հրատ., Երևան, 2008, 200 էջ:
2. *Սահակյան Լ. Ս.,* Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը օսմանյան աշխարհագիր մատյաններում, «Լուսակն» հրատ., Երևան, 2007, 307 էջ:

Հոդված

1. *Գալստյան Ս. Ա.,* Անորոշ դերբայը բառակազմական անփոփոխ հիմք, Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ, թիվ 1, Երևան, 2008, էջ 98-104:
2. *Թելյան Լ. Գ.,* Հայերեն թևավոր խոսքեր, բառարան, գրախոսություն, Լեզվաբանության հանդես, թիվ. 2, 2008, էջ 35-39:
3. *Հովհաննիսյան Հ. Ժ.,* Շուշեցի գեներալ-աղյուտանտը, Շուշիի ազատագրման 15-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2008, էջ 116-121:
4. *Հովհաննիսյան Հ. Ժ.,* Պատմության դասեր և իրողություններ, Հայաստանը նախագահական ընտրություն-ների շեմին, Գիտաժողովի նյութեր, «Նշանակ» հրատ., Երևան, 2008, էջ 6-13:
5. *Հովհաննիսյան Հ. Ժ.,* 1920 թ. հայ-թուրքական պատերազմի չպարտված ճակատը, «Հայկական բանակ», թիվ 1, Երևան, 2008, էջ 103-113:
6. *Հովհաննիսյան Հ. Ժ.,* Ճշմարտություն հանրահայտ պատմության կամ եկեղեցական դպիրի մի վկայության մասին, «Էջմիածին» ամսագիր, թիվ Գ, Էջմիածին, 2008, էջ 68-74:
7. *Հովհաննիսյան Հ. Ժ.,* Ղարաբաղը ռուսական աղբյուրներում (18-րդ դարի վերջ-19-րդ դարի սկիզբ), Էջմիածին, հ. Դ, Էջմիածին, 2007, էջ 75-83:
8. *Ղարիբյան Ա. Ա.,* Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը Փարիզի խաղաղության վեհաժողովում 1919-1920 թթ., Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2007, էջ 115-120:
9. *Ղուկասյան Է. Ռ.,* Հայոց պատմության հարցերը հայագետ Լրվյան դը Ֆլորիվալի մեկնաբանությամբ, Էջմիածին, Բ-Գ, 2007, էջ 150-157:

10. *Մելքիխանյան Փ. Գ.,* Մ. Մաշտոցը և Սուրբ գրքի թարգմանությունը, Կանթեղ, թիվ 3, Երևան, 2007, էջ 59-68:
11. *Մելքիխանյան Փ. Գ.,* Աստվածաշնչի հատկանվանագիտություն. Մարգարեներ, «Հայ աստվածաբան», հոդվածների ժողովածու, Ա, էջ 25-40:
12. *Սահակյան Լ. Ս.,* Հայկական երգերը՝ բռնի կրոնափոխված համշեցիների ինքնության հիշողություն և դրսևորում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, թիվ 5, Երևան, 2008, էջ 243-260:
13. Սահակյան Լ. Ս., The Armenian language as a remembrance and manifestion of the Islamized Hamsheians etnic identity, Armenian Folia anglistika, International journal of English stadies, 2, 2007, p. 162-172.
14. *Սարգսյան Վ. Գ.,* Nueva interpretacign etimolggica de la palabra vasca *mendi* 'montaɲa' (segOn los datos de la reconstruccign interna), Ռոմանական բանասիրության հանդես, թիվ 7, Երևան, 2008, էջ 51-67:
15. *Մաղալյան Վ. Ս.,* Երախտավոր մանկավարժը. էջեր Վրաստանի հայկական դպրոցների պատմությունից (հոդվածների, ակնարկների և հուշերի ժողովածու), առաջաբանը և վերջաբանը՝ Վ. Մաղալյանի, հեղ. հրատ., Երևան, 2007, 252 էջ:
16. *Մաղալյան Վ. Ս.,* Հանճարեղ հայագետին նվիրված մենագրություն (ակադեմիկոս Հ. Աճառյանի ծննդյան 130-ամյակի առթիվ), գրախոսություն պրոֆ. Խ. Բաղիկյանի «Հրաչյա Աճառյան. մարդը և գիտնականը» գրքի մասին, «Կրթությունը և գիտությունը Արցախում», թիվ 3-4, Երևան, 2007, էջ 105-112:
17. *Մաղալյան Վ. Ս.,* Երեք օր Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հետ կամ ուխտագնացություն դեպի Ջավախք, «Մեր դժվարին ժամանակների մեծ հայը» ժողովածուում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., Երևան, 2007, էջ 91-96:
18. *Մաղալյան Վ. Ս.,* Վրաց գրականության մեկուկես հազարամյակի պատմությունը հայերեն, գրախոսություն Հր. Բայրամյանի «Վրաց գրականությունը V-XIX դդ.» ուսումնական ձեռնարկի մասին, «Կրթությունը և գիտությունը Արցախում», թիվ 3-4, Երևան, 2008:

Զեկուցումների թեզիս

1. *Հովհաննիսյան Հ. Ժ.,* Հայոց պատմության ուսուցման առանձնահատկությունները օտարերկրյա քաղաքացիների ֆակուլտետում, Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնահարցեր և լուծումներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ., Երևան, 2008, էջ 155-157:
2. *Սահակյան Լ. Ս.,* Սփյուռքահայ ուսանողներին օսմանագիտական կրթական և հետազոտական ծրագրերում ընդգրկելու մասին. Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնահարցեր և լուծումներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2008, էջ 117:
3. *Симонян А. Г.,* Туркменчай-1828: Историческая перспектива независимости, Родина, рос. журнал, N 2, 2008, с. 9-13.